ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/29

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝

«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Հ. Քոյլոյանի (լիազորագիր, տրված՝ 13.03.2020թ.)

Հ. Ղազարյանի (լիազորագիր, տրված՝ 13.03.2020թ.)

քննելով Կադաստրի կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար մոնիթորինգային կենտրոնի սարքավորումների, ներառյալ տեսահսկման համակարգերի ստեղծման-տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից 18.03.2020թ. ներկայացված (18.03.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/29 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 18.03.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Կադաստրի կոմիտեն 03.03.2020 թվականին հայտարարել է թիվ «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/19» ծածկագրով գնանշման հարցում (հետայսու նաև՝ Ընթացակարգ), իր կարիքների համար՝ մոնիթորինգային կենտրոնի սարքավորումների, ներառյալ տեսահսկման համակարգերի ստեղծման-տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով:

Ընթացակարգի շրջանակում «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊՆ-ն Ընթացակարգին մասնակցության նպատակով 10.03.2020 թվականին ներկայացրել է հայտ, առաջարկելով պայմանագիրը կատարել 34 000 000 (երեսունչորս միլիոն) ՀՀ դրամ արժեքով:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/19» գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովը (հետայսու նաև՝ Հանձնաժողով) 11.03.2020 թվականի թիվ 1.1 արձանագրությամբ մերժել է Ընկերության հայտը՝ գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ԱԱՀ դաշտերի հանրագումարը ընդհանուր գնին չհամապատասխանելու պատճառով:

Ընկերությունը վկայակոչել է բողոքի փաստական և իրավական հետևյալ հիմնավորումները.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին մասի դ) ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 32-րդ կետի 2-րդ մասի դ) և ե) ենթակետերի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են

առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը կամ գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում՝ սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը:

Կարգի 40-րդ կետի 2-րդ մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված

տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 52-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր:

Ընկերությունը հայտնել է, որ վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել հետևյալը, որ մասնակիցը հրավերով պետք է ներկայացնի գնային առաջարկ, որը պետք է ներկայացվի՝ ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Մասնակիցը կարող է իր ներկայացրած գնային առաջարկում առկա գումարները ներկայացնել կլորացված, եթե ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը, ընդ որում այդ հանգամանքը հայտի մերժման հիմք չէ: Հայտի մերժման հիմք չէ նաև այն հանգամանքը, երբ գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Նշված կարգավորումները սահմանելիս Օրենսդիրը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր: Այսինքն՝ պայմանագրի գնի կայուն լինելու պարագայում մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկին ի լրումն չի կարող ներկայացվել գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ուստի Օրենսդիրը Հանձնաժողովի համար սահմանել է պարտականություն հայտը չմերժելու՝ ի թիվս այլնի, նաև այն դեպքում, եթե գնային առաջարկում նշված գումարները կլորացված են, կամ եթե գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Իրականության մեջ հնարավոր է նաև

այնպիսի իրավիճակ երբ գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ոչ թե ավելորդ բառեր, այլ պակաս են բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ, սույն դեպքում Ընկերությունը գործ ունի նույն իրավիճակի տարբեր դրսևորումների հետ, որը կարգավորված չէ, սակայն օրենքի անալոգիայի կիրառման հիմքով պետք է փաստել, որ գնային առաջարկում ներկայացված գումարների կլորացման արդյունքում ստեղծված անհամապատասխանությունները հայտի մերժման հիմք չեն: Քանզի նշված հանգամանքը, Հանձնաժողովը հայտերի բացման և գնահատման փուլում պարզել չի կարող, այն պատճառով, որ գնային առաջարկին ի լրումն չի կարող ներկայացվել գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ուստի Օրենսդիրը Հանձնաժողովի համար սահմանել է հնարավորություն և պարտադիր կատարման պայման՝ առկա անհամապատասխանության պարագայում հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցնի նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցի մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկելու անհամապատասխանությունը և միայն արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում նոր միայն մասնակցի հայտը ենթակա է մերժման:

Ընկերությունը հայտնել է, որ նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել, որ Ընկերությունը 10.03.2020 թվականի ներկայացրած հայտում առկա գնային առաջարկում գումարները ներկայացրել է կլորացված տարբերակով, որի մեջ Հանձնաժողովը կարող էր համոզվել միայն տարրական թվաբանության արդյունքում, այսինքն՝ ինքնարժեքի և շահույթի գումարման և ԱԱՀ-ի հաշվարկման պարագայում կարձանագրեր այն փաստը, որ ինքնարժեքը կազմում է 21 794 871.79, որը ներկայացվել է կլորացված՝ 21 794 872,0 շահույթը կազմում է 6 538 461.54, որը ներկայացվել է կլորացված՝ 6 538 462, ԱԱՀ-ն կազմում է 5 666 666.67 ՀՀ դրամ, որը ներկայացվել է կլորացված՝ 5 666 667, արդյունքում հանրագումարը պետք է կազմեր 34 000 001 ՀՀ դրամ, սակայն ընդհանուր գինը նշվել է 34 000 000 ՀՀ դրամ, որի տառերով նշվածի մեջ էլ բացակայում է մեկ բառը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը գնային առաջարկի ընդհանուր գինը չի նշել 34 000 001 ՀՀ դրամ, ուստի պետք է Հանձնաժողը հանգեր այն

հետևության, որ հնարավոր է ինքնարժեք և շահույթ դաշտերում նշված գումարներն էլ է կլորացված, որի վերաբերյալ պարզաբանումներ կամ լրացուցիչ հիմնավորումներ մասնակիցը չէր կարող ներկայացնել: Ուստի նշվածով պայմանավորված ծագած անհամապատասխանության դեպքում Հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և առաջարկեր Ընկերությանը շտկելու առկա անհամապատասխանությունը, որի չի կատարել, այն դեպքում, երբ դա Հանձնաժողովի օրենսդրական պարտականությունն էր, ավելին՝ Հանձնաժողովը արձանագրելով անհամապատասխանություն, առանց շտկման համար հնարավորություն ընձեռնելու մերժել է մասնակցի հայտը, թույլ տալով Կարգի 40-րդ և 41-րդ կետերի խախտում:

Ընկերությունը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել թիվ «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/19» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովին ընդունելու հետևյալ որոշումները՝

1.Վերացնելու կամ չեղարկելու «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը,

2.Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում թիվ «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/19» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու և «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի գնային առաջարկի մասով արձանագրված անհամապատասխանությունը շտկելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.03.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2.<u>Կադաստրի կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 18.03.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/4244-2020 գրության՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու պահանջի վերաբերյալ, Կադաստրի

կոմիտեն գրությամբ հայտնել է, որ տրամադրում է ԿԿ-ԳՀԾՁԲ-20/19 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.03.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Կադաստրի կոմիտեի կարիքների համար մոնիթորինգային կենտրոնի սարքավորումների, ներառյալ տեսահսկման համակարգերի ստեղծման-տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է ***03.03.2020թ.***:

2. Կադաստրի կոմիտեի կողմից կազմակերպված «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/19» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է 19.03.2020թ.:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի 18.03.2020թ. ներկայացված բողոքը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված**

հրապարակման ենթակա տեղեկատվության <u>հրապարակման նպատակով</u> <u>*www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է*</u>:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>գնումների պլանը</u>***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***<u>պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում</u>***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ <u>գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը</u> սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 18.03.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/4297-2020 գրությամբ դիմել է Կադաստրի կոմիտեին՝ խնդրելով տրամադրել Կադաստրի կոմիտեի կողմից կազմակերպված «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/19» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող համապատասխան հղումը և/կամ կայքից արտատպված փաստաթուղթը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ այն հրապարակվել է ***<u>19.03.2020թ.</u>***՝ ավելի ուշ քան, Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը, ընդ որում վերոհիշյալ նորմերից բխում է, որ պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և գնումները

համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/19» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները, ուստիև գտնում եմ, որ Ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգն ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստիև այն հայտարարվում է չկայացած, հետևաբար նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման շրջանակներում քննության առարկա չի դարձնում բողոքով վիճարկվող Ընկերության հայտը մերժելու իրավաչափության հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից 18.03.2020թ. ներկայացված բողոքը մերժել:
2. Պարտավորեցնել «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**